

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2014-3-1-Ա

ք. Երևան

29.04.2014թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2014 թվականի ապրիլի 29-ի նիստում քննարկեց 2014 թվականի մարտի 10-ին «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Նաիրա Մանուչարյանի կողմից ներկայացված դիմումը «ԻԴԵԱԼ» բառային տարր պարունակող համակցված ապրանքային նշանը 19.09.2012թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու վերաբերյալ հետևյալ ծառայությունների համար՝ դաս 35. կերամիկական ապրանքների, ջեռուցման համակարգերի, շինարարական նյութերի իրացում, դաս 37. ջեռուցման համակարգի մոնտաժում (տեղակայում, տեղադրում), նորոգում:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացվել են հետևյալ լրացուցիչ փաստաթղթերը և հիմնավորումները.

1. «ԻԴԵԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ» անվանումով խանութ-սրահների ցանցը ՀՀ տարածքում,
2. «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 2004-2012թթ. ֆինանսական հաշվետվություններից և անկախ աուդիտորի եզրակացությունից քաղվածք, որտեղ նշվում է ընկերության մարքեթինգային և գովազդային ծախսերը,
3. «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պատկանող՝ www.idealsystem.am կայքի և ֆեյսբուքյան այցելությունների քանակի վիճակագրությունը,
4. «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի մարքեթինգային ծառայությունների հաշվետվությունը,
5. 13.03.2014թ. «Սփյուռ» ՍՊԸ-ի կողմից «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրամադրված «Սփյուռի» հեռախոսային տեղեկատուի մեջ և «Սփյուռի» վեր կայքում «ԻԴԵԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ» անվանումով խանութ-սրահների ցանցի հարցումների և դիտումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ,

6. «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործունեության հետ առնչվող ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումները:

Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «ԻԴԵԱԼ» բառային տարր պարունակող համակցված ապրանքային նշանը օգտագործման արդյունքում լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ծառայությունների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է նշանը: Հետևաբար դիմումը պետք է ամբողջությամբ բավարարել և «ԻԴԵԱԼ» բառային տարր պարունակող համակցված ապրանքային նշանը ՀՀ-ում հանրահայտ ճանաչել:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (հասցե՝ Երևան, Թբիլիսյան խճուղի 25) ներկայացուցիչ Նաիրա Մանուչարյանի կողմից ներկայացված դիմումը ամբողջությամբ և «ԻԴԵԱԼ» բառային տարր պարունակող համակցված ապրանքային նշանը (բերված է ստորև) 19.09.2012թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ճանաչել հանրահայտ հետևյալ ծառայությունների համար՝ դաս 35. կերամիկական ապրանքների, ջեռուցման համակարգերի, շինարարական նյութերի իրացում, դաս 37. ջեռուցման համակարգի մոնտաժում (տեղակայում, տեղադրում), նորոգում:

Ի Դ Ե Ա Լ